Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի՝
2013 թվականի հունվարի 17-ի նիստի N 7 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքում հետազոտական կենտրոն ստեղծելու մասին հարցը:**

Զեկուցող՝ ՀՊՏՀ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Կորյուն Աթոյան:**

Զեկուցողը նշեց. գիտության զարգացման համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ գիտահետազոտական աշխատանքները կենտրոնացած են համալսարաններում, ինչը նաև նպաստում է կրթության որակի և մրցունակության բարձրացմանը: Այդ խնդիրը սովորաբար լուծվում է համալսարաններում հետազոտական կառույցների ձևավորմամբ:

Եվրոպական բարձրագույն կրթական և հետազոտական տարածությունում ինտեգրվելու Հայաստանի որդեգրված քաղաքականությունը նոր խնդիրներ է դնում հանրապետության համալսարանների առջև: ՀՊՏՀ-ում հետազոտական կենտրոնի ստեղծումը միտված է այդ խնդիրները լուծելուն:

Հետազոտական կենտրոնի հիմնական նպատակը համալսարանի և հանրապետության լավագույն տնտեսագիտական կադրերի ներգրավվմամբ հանրապետության համար առավել հրատապ սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հետազոտումն է և համապատասխան առաջարկությունների մշակումը: Կարևոր նպատակներից են նաև՝

1) համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցությամբ գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, ինչը դրական ազդեցություն կունենա դասավանդվող կրթական մոդուլների որակի և հանրապետության գիտակրթա-

կան շուկայում համալսարանի մրցունակության բարձրացման վրա,

2) տնտեսական զարգացման գլոբալ և լոկալ միտումների վերլուծությունը և կանխատեսումների մշակումը,
3) ՀՊՏՀ կրթական գործընթացների գիտահետազոտական ապահովումը,
4) տնտեսական քաղաքականության ծրագրերի և օրենսդրական ակտերի փորձաքննության իրականացումը և համապատասխան առաջարկությունների և զեկուցումների ներկայացումը,
5) գիտելիքահենք տնտեսության ձևավորման հիմքերի հետազոտումը և համապատասխան համաթվի մշակումը:

Հետազոտական կենտրոնի հաստիքների թիվը կկազմի 4 հաստիք: Ըստ հետազոտությունների բնագավառների՝ պայմանագրային հիմունքներով կներգրավվեն համապատասխան մասնագետներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Հ. Աբրահամյանը, Կ. Ճշմարիտյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ստեղծել հետազոտական կենտրոն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքում:

Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն:

ՀՊՏՀ խորհրդի նախագահ **Հովիկ Աբրահամյան**

ՀՊՏՀ խորհրդի քարտուղար **Նաիրա Դարբինյան**

17.01.2013 թ.

ք. Երևան